$$h_n(x) = \frac{\varphi(x, \mu_n(tq, \pi, \beta))}{\|\varphi(\cdot, \mu_n)\|}.$$

Для решения $\varphi(x, \mu)$ в [12] при $q \in L^1_+[0, \pi]$ получена оценка (при $|\mu| \geq 1$)

$$\left| \varphi(x, \mu) - \frac{\sin \sqrt{\mu} x}{\sqrt{\mu}} \right| \leq \frac{\sigma_0(x)}{|\mu|} e^{|\operatorname{Im} \sqrt{\mu}| x} \frac{\sigma_0(x)}{|\mu|},$$

где $\sigma_0(x) = \int_0^x |q(t)| dt$. Эта оценка несколько уточняет и обобщает оценки, полученные ранее (см., например, [5], [9], [10], [13]). Поскольку $\operatorname{Im} \mu_n = 0$, то

$$\varphi^2(x, \mu_n(tq, \beta)) = \frac{\sin^2 \sqrt{\mu_n(tq, \beta)} x}{\mu_n(tq, \beta)} + O\left(\frac{1}{n^3}\right),$$

причем оценка остатка равномерна по всем $t \in [0, 1]$, $\beta \in [0, \pi]$ и всем q из ограниченных подмножеств $L^1_R[0, \pi]$. Отсюда для $\|\varphi(\cdot, \mu_n)\|$ получаем

$$\|\varphi(\cdot, \mu_n)\|^2 = \int_0^\pi \varphi^2(x, \mu_n(tq, \beta)) dx = \frac{\pi}{2\mu_n} \left(1 - O\left(\frac{1}{n}\right)\right).$$

Наконец, из этих оценок, учитывая равномерную ограниченность $h_n^2(x, tq)$ и следующую из (11) и (12) оценку $\sin \sqrt{\mu_n(tq)} x = \sin(n + \beta_n(\beta))x + O\left(\frac{1}{n}\right)$ для h_n^2 получаем оценку

$$h_n^2(x, tq, \pi, \beta) = \frac{2}{\pi} \sin^2(n + b_n(\beta))x + O\left(\frac{1}{n}\right),$$

которая равномерна по всем q из ограниченных подмножеств $L^1_R[0, \pi]$, по всем $t \in [0, 1]$ и всем $\beta \in [0, \pi]$ и которая эквивалентна формуле (13).

7. Обобщения.

Изложенными выше методами получаются асимптотики собственных значений и других задач Штурма-Лиувилля, например

$$\mu_n \left(q, \alpha, \frac{\pi}{2} \right) = \left(n + b_n \left(\alpha, \frac{\pi}{2} \right) \right)^2 + \frac{1}{\pi} \int_0^{\pi} q(x) dx + \frac{1}{\pi} \int_0^{\pi} q(x) \cos \left(2n(\pi - x) + 2b_n \left(\alpha, \frac{\pi}{2} \right) (\pi - x) \right) dx + O \left(\frac{1}{n} \right),$$

где

$$b_n \left(\alpha, \frac{\pi}{2} \right) = \frac{1}{\pi} \arccos \frac{\cos \alpha}{\sqrt{\left(n + b_n \left(\alpha, \frac{\pi}{2} \right) \right)^2 \sin^2 \alpha + \cos^2 \alpha}} - \frac{1}{2}.$$

$\left(\frac{1}{n^2} \right)$ только для

Литература

1. Liouville J. Sur le developpement des fonctions en series de fonctions en se'ries don't les divers termes sont assuj'e'tis 'a une me'me e'quation diffe'rentielle du second ordre, contenant un param'e'tre variable // Journal de math. Put et appl. I (1836). P. 253-265; II (1837). P. 16-35, 418-436.
2. Hobson E. W. On a general convergence theorem and theory of the representation of function by series of normal functions // Proc. Of the London Mth. Soc. (2), 1908. V. 6. P. 349-395.
3. Kneser A. Untersuchungen u'ber die Darstellung willku'rlicher Funktionen in der mathematischen Physik // Math. Ann. 1904. V. 38. P. 81-147.
4. Жиков В. В. Об обратных задачах Штурма-Лиувилля на конечном отрезке. // Изв. АН СССР, сер. матем. 1967. Т. 31. с. 965-976.
5. Марченко В. А. Операторы Штурма-Лиувилля и их приложения. Киев. Наукова думка. 1977.
6. Марченко В. А. Некоторые вопросы линейных дифференциальных операторов второго порядка. // Труды ММО. 1952. Т. 1. с. 326-407.
7. Isaacson E., Troubowitz E. The inverse Sturm-Liouville problem I // Comm. Pure Appl. Math. 1983. Vol. 36. P. 767-783.
8. Dahlberg B. E. J., Troubowitz E. The inverse Sturm-Liouville problem III // Comm. Pure Appl. Math. 1984. Vol. 37. P. 255-267.
9. Левитан Б. М., Саргсян И. С. Операторы Штурма-Лиувилля и Дирака. М.: Наука. 1988.
10. Rösche J., Troubowitz E. Inverse Spectral Theory. Academic Press. 1987.
11. Библиков Ю. Н. Общий курс обыкновенных дифференциальных уравнений. Изд. ЛГУ. 1981.
12. Арутюнян Т. Н., Овсепян М. О. О решениях уравнения Штурма-Лиувилля // Математика в Высшей школе. (Ереван). 2005. Т. 1. N 3. с. 59-74.
13. Титчмарш Э. Ч. Разложения по собственным функциям, связанные с дифференциальными уравнениями второго порядка. М.: Изд-во Иностран. Лит. 1960.

Ամփոփում

Շտուրմ-Լիուվիլի խնդրի սեփական արժեքների դասական ափսոսալիկաները «փարմարեցված» են ֆիքսված եզրային պայմանների համար և չեն դիտարկում սեփական արժեքների ողորկ կախվածության դեպքերը եզրային պայմանները որոշող պարամետրերից: Աշխատանքում արտածվում է ափսոսալիկան նկարագրող նոր բանաձև, որը մի քիչ ավելի է ընդհանրացնում ու ճշգրտում դասական բանաձևը և ընդգրկում է նաև սեփական արժեքների եզրային պայմաններից անալիտիկ կախվածության դեպքը:

$t \in [0,1]$ и всем

Պ. ԷՐԴՐՅՈՇԻ ԽՆԴԻՐԻ ՆՄԱՆԱՏԻՊ ՄԻ ԽՆԴԻՐԻ ՈՐՈՇ
ԴԵՊՐԵՐԻ ԼՈՒՏՈՒՄՆԵՐԸ

Ո.Մ.Մուսայելյան

Հոդվածում լուծված է Պ. Էրդյոշի խնդրի նմանատիպ մի խնդիր. Ցանկացած բնական k ($k > 1$) թվի համար միշտ գոյություն կունենան այնպիսի x, y, z բնական թվեր, որ տեղի կունենա

$$\frac{5}{k} = \frac{1}{x} + \frac{1}{y} + \frac{1}{z}$$

հավասարությունը: Այս հոդվածում բերված է խնդրի լուծումը բոլոր k թվերի դեպքում բացառությամբ 1 կամ 9 թվանշանով վերջացող որոշ տիպի պարզ թվերի:

Խնդրի դրվածքը.

Պ. Էրդյոշի խնդիրը կայանում է հետևյալում. Ցանկացած բնական k ($k > 1$) թվի համար առյուծ՝ միշտ գոյություն կունենան այնպիսի x, y, z բնական թվեր, որ տեղի ունենա (1) հավասարությունը: Այս խնդիրը շարադրված է Գ.Ա. Տոնոյանի [1] գրքում (էջ 78):

Այդ նույն բաժնի էջ 82-ում ձևակերպված է այս հոդվածում շարադրված խնդիրը, որը ունենալով նմանատիպություն Պ. Էրդյոշի խնդրին, վերնագրված է որպես Պ. Էրդյոշի խնդրի նմանատիպ խնդիր:

Ձևակերպենք և ապացուցենք մի շարք թեորեմներ:

Թեորեմ 1. Եթե $k = 2m$, ($m = 1, 2, 3, \dots$) ապա գոյություն ունեն x, y, z այնպիսի բնական թվեր, որ տեղի ունի (1) հավասարությունը:

Ապացույց. Դիցուք $k = 2m$, $m \in \mathbb{N}^{(1)}$: Թվերի տեսությունից հայտնի է, որ յուրաքանչյուր k բնական թիվ կարելի է վերլուծել պարզ արտադրիչների, ընդ որում՝ միակ ձևով: Ենթադրենք

$$k = p_1^{a_1} p_2^{a_2} \dots p_n^{a_n}, \quad (2)$$

որտեղ $p_1 < p_2 < \dots < p_n$ պարզ թվեր են, իսկ $a_i \in \mathbb{N}$ երբ $i \in \{1, 2, 3, \dots, n\}$ բազմությանը:

Բանի որ միակ գույգ պարզ թիվը 2-ն է, ուստի դիտարկված դեպքում պետք է ընդունել $p_1 = 2$:

Վերցնենք $x = y = 2^{a_1-1} p_2^{a_2} \dots p_n^{a_n}$, իսկ $z = 2^{a_1} p_2^{a_2} \dots p_n^{a_n}$:

Կտանանք՝

$$\frac{5}{2^{a_1} p_2^{a_2} \dots p_n^{a_n}} = \frac{1}{2^{a_1-1} p_2^{a_2} \dots p_n^{a_n}} + \frac{1}{2^{a_1-1} p_2^{a_2} \dots p_n^{a_n}} + \frac{1}{2^{a_1} p_2^{a_2} \dots p_n^{a_n}};$$

Իրոք,

$$\frac{1}{2^{a_1-1} A} + \frac{1}{2^{a_1-1} A} + \frac{1}{2^{a_1} A} = \frac{2 + 2 + 1}{2^{a_1} A} = \frac{5}{2^{a_1} A},$$

Այստեղ օգտագործված է $A = p_2^{a_2} p_3^{a_3} \dots p_n^{a_n}$ նշանակումը:

Թեորեմում ապացուցված է:

Թեորեմ 2: Եթե (2) վերլուծության մեջ պարզ թվերից մեկը 5 թիվն է, ապա գոյություն կունենան x, y, z այնպիսի բնական թվեր, որ տեղի ունի (1)-ը:

Ապացույց. Դիցուք $p_1 = 5$: Վերցնելով $x = y = z = 3 \cdot 5^{a_1-1} p_2^{a_2} \dots p_n^{a_n}$, կտանանք

$$\frac{5}{3 \cdot 5^{a_1-1} p_2^{a_2} \dots p_n^{a_n}} = \frac{1}{3 \cdot 5^{a_1-1} p_2^{a_2} \dots p_n^{a_n}} + \frac{1}{3 \cdot 5^{a_1-1} p_2^{a_2} \dots p_n^{a_n}} + \frac{1}{3 \cdot 5^{a_1-1} p_2^{a_2} \dots p_n^{a_n}};$$

Իրոք,

$$\frac{1}{3 \cdot 5^{a_1-1} A} + \frac{1}{3 \cdot 5^{a_1-1} A} + \frac{1}{3 \cdot 5^{a_1-1} A} = \frac{3}{3 \cdot 5^{a_1-1} A} = \frac{5}{3 \cdot 5^{a_1} A};$$

Թեորեմն ապացուցված է:

Թեորեմ 3: Եթե (2) վերլուծության մեջ գտնվում են պարզ թիվ $5r+2$ տեսքի է, ապա միշտ գոյություն կունենան այնպիսի x, y, z բնական թվեր, որ նորից տեղի ունի (1) հավասարությունը:

Ապացույց: Որոշակիություն համար ենթադրենք (2) վերլուծության մեջ $5r+2$ տեսքի պարզ թիվ P_1 -ն է: Նշենք, որ r -ի միայն կենտ արժեքների դեպքում $5r+2$ թիվը կլինի կենտ պարզ թիվ: Որոշման այդ պարզ թիվը միշտ կվերջանա 7 թվանշանով: Հետևաբար՝ $P_1 + 3$ թիվը կլինի 10-ի բազմապատիկ: Այժմ վերցնելով $x = P_1^{\alpha_1-1} P_2^{\alpha_2} \dots P_n^{\alpha_n} \cdot \frac{P_1+3}{5}$, $y = P_1^{\alpha_1} P_2^{\alpha_2} \dots P_n^{\alpha_n} \cdot \frac{P_1+2}{10}$, $z = P_1^{\alpha_1} P_2^{\alpha_2} \dots P_n^{\alpha_n} \cdot \frac{P_1+3}{5}$, կստանանք՝

$$\frac{5}{P_1^{\alpha_1} P_2^{\alpha_2} \dots P_n^{\alpha_n}} = \frac{1}{P_1^{\alpha_1-1} P_2^{\alpha_2} \dots P_n^{\alpha_n} \cdot \frac{P_1+3}{5}} + \frac{1}{P_1^{\alpha_1} P_2^{\alpha_2} \dots P_n^{\alpha_n} \cdot \frac{P_1+3}{10}} + \frac{1}{P_1^{\alpha_1} P_2^{\alpha_2} \dots P_n^{\alpha_n} \cdot \frac{P_1+3}{5}}$$

իրոք,

$$\frac{1}{P_1^{\alpha_1-1} A \cdot \frac{P_1+3}{5}} + \frac{1}{P_1^{\alpha_1} A \cdot \frac{P_1+3}{10}} + \frac{1}{P_1^{\alpha_1} A \cdot \frac{P_1+3}{5}} = \frac{5P_1 + 10 + 5}{P_1^{\alpha_1} A \cdot (P_1 + 3)} = \frac{5}{P_1^{\alpha_1} P_2^{\alpha_2} \dots P_n^{\alpha_n}}$$

Թեորեմ 4: Եթե (2) վերլուծության մեջ գտնվում են պարզ թիվ $5r+3$ տեսքի է, ապա միշտ գոյություն կունենան այնպիսի x, y, z բնական թվեր, որ տեղի ունի (1)-ը:

Ապացույց: Ենթադրենք (2) վերլուծության մեջ $5r+3$ տեսքի պարզ թիվը P_1 -ն է: Նշենք, որ այդ տեսքի թվերը պարզ կլինեն միայն r -ի գույգ արժեքների դեպքում: Ուստի այդ տեսքի պարզ թիվը միշտ կվերջանա 3 թվանշանով: Հետևաբար՝ $P_1 + 2$ թիվը կվերջանա 5 թվանշանով: Այժմ, որպես x, y, z բնական թվեր, վերցնենք $x = P_1^{\alpha_1-1} P_2^{\alpha_2} \dots P_n^{\alpha_n} \cdot \frac{P_1+2}{5}$, $y = P_1^{\alpha_1} P_2^{\alpha_2} \dots P_n^{\alpha_n} \cdot \frac{P_1+2}{5}$, $z = P_1^{\alpha_1} P_2^{\alpha_2} \dots P_n^{\alpha_n} \cdot \frac{P_1+2}{5}$,

Յույց տանք, որ տեղի ունի (1) հավասարությունը, սրտով k -ն (2) վերլուծությունն է, իսկ x, y, z բնական թվերը վերը նշվածներն են:

իրոք,

$$\frac{1}{P_1^{\alpha_1-1} A \cdot \frac{P_1+2}{5}} + \frac{1}{k \cdot \frac{P_1+2}{5}} + \frac{1}{k \cdot \frac{(P_1+2)}{5}} = \frac{5P_1 + 5 + 5}{k(P_1 + 2)} = \frac{5}{k}$$

Այստեղ նորից օգտագործված է $A = P_2^{\alpha_2} P_3^{\alpha_3} \dots P_n^{\alpha_n}$ նշանակումը: Թեորեմ 5: Եթե (2) վերլուծության մեջ գտնվում են պարզ թիվ, ասենք P_1 -ը $5r+1$ տեսքի է, P_1+4 թիվը բազմապատիկն է 3-ին, ապա գոյություն կունենան այնպիսի x, y, z բնական թվեր, որ տեղի ունի (1) հավասարությունը:

Ապացույց: Հստ թեորեմի պայմանի P_1+4 թիվը բազմապատիկն է 3-ի: Մյուս կողմից $P_1 = 5r+1$ պարզ թիվ է: Բայց այն պարզ կլինի միայն r -ի գույգ արժեքների դեպքում: Ուստի P_1+4 թիվը վերջանում է 5 թվանշանով: Ստացվեց, որ P_1+4 թիվը բաժանվում է և 3-ի, և 5-ի: Քանի որ 3 և 5 թվերը փոխադարձ պարզ են, ուստի P_1+4 թիվը կբաժանվի նաև 15-ի: Այժմ, որպես x, y, z բնական թվեր, վերցնենք $x = P_1^{\alpha_1-1} P_2^{\alpha_2} \dots P_n^{\alpha_n} \cdot \frac{P_1+4}{5}$,

$$y = P_1^{\alpha_1} P_2^{\alpha_2} \dots P_n^{\alpha_n} \cdot \frac{P_1+4}{15}, z = P_1^{\alpha_1} P_2^{\alpha_2} P_3^{\alpha_3} \dots P_n^{\alpha_n} \cdot \frac{P_1+4}{5}:$$

Յույց տանք, որ տեղի ունի (1)-ը, որտեղ k -ն (2) վերլուծությունն է, իսկ x, y, z բնական թվերը վերը նշվածներն են:

Իրոք,

$$\frac{1}{P_1^{\alpha_1-1} A \cdot \frac{P_1+4}{5}} + \frac{1}{k \cdot \frac{P_1+4}{15}} + \frac{1}{k \cdot \frac{P_1+4}{5}} = \frac{5P_1+15+5}{k(P_1+4)} = \frac{5}{k};$$

Թևորեն ապացուցված է:

Թևորեն 6. Եթե (2) վերլուծության մեջ գտնվում են պարզ թիվ, ասենք P_1 -ը, $5r+4$ տեսքի է, P_1+1 թիվը բազմապատիկն է 3-ի կամ 4-ի, ապա զոյություն կունենան այնպիսի x, y, z բնական թիվ, որ $\frac{5}{k} = \frac{1}{x} + \frac{1}{y} + \frac{1}{z}$:

Ապացույց: Ըստ թևորենի պայմանի $P_1 = 5r+4$ պարզ թիվ է: Հետևաբար r -ը պետք է լինի կենտ թիվ: Կատարվի, որ P_1+1 թիվը 10-ի բազմապատիկն է: Եթե P_1+1 թիվը բաժանվում է 3-ի, ապա որպես x, y, z բնական թվեր կվերցնենք $x = P_1^{\alpha_1-1} A \cdot \frac{P_1+1}{5}, y = k \cdot \frac{P_1+1}{3}, z = k \cdot \frac{P_1+1}{2}$:

Իսկ եթե P_1+1 թիվը 4-ի բազմապատիկն է, ապա որպես x, y, z բնական թվեր կվերցնենք $x = P_1^{\alpha_1-1} A \cdot \frac{P_1+1}{5}, y = k \cdot \frac{P_1+1}{4}, z = k \cdot (P_1+1)$:

Նշենք, որ նախորդ դեպքերի նման A -ով նշանակված է $P_2^{\alpha_2} P_3^{\alpha_3} \dots P_n^{\alpha_n}$ արտահայտությունը: Առաջին դեպքում կստանանք՝

$$\frac{1}{P_1^{\alpha_1-1} A \cdot \frac{P_1+1}{5}} + \frac{1}{k \cdot \frac{P_1+1}{3}} + \frac{1}{k \cdot \frac{P_1+1}{2}} = \frac{5P_1+3+2}{k(P_1+1)} = \frac{5(P_1+1)}{k(P_1+1)} = \frac{5}{k};$$

Մյուս դեպքում կստանանք՝

$$\frac{1}{P_1^{\alpha_1-1} A \cdot \frac{P_1+1}{5}} + \frac{1}{k \cdot \frac{P_1+1}{4}} + \frac{1}{k \cdot (P_1+1)} = \frac{5P_1+4+1}{k(P_1+1)} = \frac{5}{k};$$

Թևորեն ապացուցված է:

Ստացվեց, որ (1) բանաձևը ճիշտ է գրեթե բոլոր դեպքերում, բացառությամբ 1 և 9 թվանշաններով վերջացող որոշ տիպի պարզ թվերի:

Գրականություն

1. Գ.Ա. Տոնյանի քում (էջ 78): «Մաթեմատիկական ընտրովի թևորեններ և խնդիրներ», Եր., «Լույս» հրատ., 1970, էջ 78:

Резюме

В статье решена задача, подобная известной задаче П. Эрдеша, которая гласит: Для любого натурального числа $k(k>1)$ всегда существуют такие натуральные числа x, y, z , при которых

$$\frac{5}{k} = \frac{1}{x} + \frac{1}{y} + \frac{1}{z},$$

где k -любое натуральное число, за исключением некоторых случаев простых чисел, последняя цифра которых 1 или 9.

WBE –ԹԵՍԱՎՈՐՈՒՄԸ ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Վ.Վ. Առստամյան

Մանկավարժական գնահատումների համակարգում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրման համար նպատակահարմար են օգտագործել թևստեր, որոնց օգնությամբ ստուգվում են մեկ կամ մի քանի ուսումնական դասընթացների թեմաներն ուսումնասիրած սովորողների գիտելիքների որակը: Լրերիտային համակարգով ուսումնառության պայմաններում թևստերի կիրառումն ավելի շատ է անհրաժեշտ, քանի որ մեծ տեղ է հատկացվում ինքնուրույն աշխատանքին: Այս դեպքում, կախված թևստավորման արդյունքներից, որոշ բովանդակային, մեթոդական կամ կազմակերպչական միջոցառումներ են ձեռնարկվում, որոնք կարող են դրական ազդեցություն ունենալ ուսուցման որակի վրա:

Լրերիտային տեխնոլոգիայի արդյունավետությունն ու որակն ապահովվելու համար անհրաժեշտ է ստեղծել թևստավորող համակարգ:

Ստուգողական թևստավորումը և բանավոր հարցումը բարձրագույն կրթության համակարգում հանդիսանում են ամենից լայն օգտագործվող և լավ մշակվող միջոցներ գիտելիքների ստուգման համար: Դասական թևստն իրենից ներկայացնում է բավականին հեշտ հարցերի հաջորդականություն: Յուրաքանչյուր հարց ունենում է հասարակ պատասխան, որը կարող է լինել ստուգված և գնահատված, ինչպես կանոնավոր, այնպես էլ անկանոն կամ մասնակի կանոնավոր: Հարցերը դասակարգվում են ըստ տիպերի, որոնք համապատասխանում են ստուգողական պատասխաններին: Դասական հարցերի տիպերը բաժանվում են «այո» կամ «ոչ» պատասխանների, լինում են նաև բազմաթիվ պատասխաններ և հարցեր պարունակող թևստեր: Ավելի բարդ հարցերի տիպերը ներառում են համապատասխանող հարցեր, ճիշտ հաջորդականության հարցեր, երաժանգի հարցեր, ինչպես նաև գրաֆիկական հարցեր: Բացի դրանից, յուրաքանչյուր աբարկայական բնագավառ կարող է ունենալ մի քանի մասնագիտացման հարցեր:

Թևստավորող և հարցադրվող գործոններն եղել են առաջին ինտերակտիվ գործոնները, կիրառված Wbe ուսուցման մեջ (Wbe - web based education), և այժմ նրանք առավել վերաբնակված են: Գոյություն ունեցող WBE համակարգը տարբերվում է իր բազմազան գործոններով, իրականացվող ըստ ստուգողական թևստերի և հարցերի կատարմամբ:

Դ. Լարենցի անվան տեխնոլոգիական համալսարանում իրականացվում է համեմատման համակարգերի կոմպլեքսային մեթոդ, որն իր մեջ ներառում է սպառիչ պատասխաններն ժամանակակից տեխնոլոգիաների՝ wbe-թևստավորման գնահատման պահին: Մեթոդը մեթոդը կարող է օգտագործվել մասնագետների հետ WBE ուսուցում իրականացնելիս և հատկապես Wbe-թևստավորման այս կամ այն համակարգերը համեմատելիս:

Համեմատման համար ցիկլը բաժանված է երեք մասի. նախաաւտորաստում, հանձնում և գնահատում: Այս մասերից յուրաքանչյուրն իր հերթին բաժանված է ավելի փոքր գործոնների, որոնք հեշտացնում են հետազոտման գործընթացը:

Բոլոր հարցերը պահպանվում են համակարգում: Պահպանված հարցի ակտիվ կցանքը սկսվում է, երբ նա ընտրված է թևստավորման կամ հարցման ներկայացման համար: Այս ընտրությունը կարող է ստեղծված լինել ինչպես վիճակագրական դասավանդող դասընթացի նշանման ընթացքում, այնպես էլ դինամիկական համակարգով կատարման ընթացքում:

Աղյուսակ 1. Թևստային հարցման կյանքի ցիկլը

Այո	Ըստ ժամանակի	Հետազոտում
Նախապատրաստում. • Ստեղծում • Պահպանում • Ընտրություն	Առարքում. • Ներկայացում • Փոխկապվածություն • Ստացված պատասխան	Գնահատական • Գնահատական • Գնահատման միավոր և գրառում • Հակադարձ կապ

Այնուհետև համակարգը ներկայացնում է հարցը: Նա գուրս է հանում՝ հարցը էկրանին ներկայացնում է այն, ինչպես նաև ուսուցման ինտերֆեյս պատասխանի համար և ընթացիկ է պատասխանը գնահատման համար: Գնահատման իրավիճակում գտնվող համակարգը պետք է ներկայացնի եկտյակ գործողությունները, գնահատել պատասխանը որպես ճշգրիտ պատասխանի մասին, տալ տեղեկատվություն ոչ ճիշտ պատասխանի մասին, կատարել գրառում ուսուցման գործողությունների մասին [1]:

WBE - միջոցները և համակարգերը նշանակալիորեն տարբերվում են իրենց տիպերով և աջակցման աստիճանով:

Համակարգի հզորությունը և աջակցման ապահովման աստիճանը լրջորեն կապված են տեխնոլոգիաների աստիճանից, որոնք օգտագործվում են հիմնական իրավիճակներում:

Հարցերը ստեղծվում են մեր կողմից և օնլայնում են հետևյալ գործոնները.

- հարցեր և հնարավոր պատասխաններ,
- ճիշտ պատասխանների մատնանշում,
- ինտերֆեյսի ներկայացման տիպ,
- տեղեկատվություն հավաքել կազմի մասին:

Բացի դրանից, օգտագործվում են բոլոր բաժինների թեմաները, վճարող բաժնի դասընթացի մասին՝ թեմտին համապատասխանող, հարցի դժվարությունը, թույլատրելի ժամանակը և այլն: Այս մեթոդները օգտագործվել են ներկայացվող հարցերի ընտրման համար, ինչպես նաև բալլերի ներկայացման համար: Պատասխանների ընտրման եղանակները սովորաբար կախված են լինում ընտրված տեխնոլոգիայից, որն օգտագործվում է համակարգում առանձին հարց-պատասխանի պահպանման համար: Այժմ գոյություն ունեն հարցերի պահպանման երկու տարբեր միջոցներ. ներկայացման ձև և ներքին ձև: WBE ուսուցում ենթատրամուր, հարցի պահպանումը ներկայացման ձևում նշանակում է նրա պահպանումը որպես HTML-կոդի ՄԱՍ: Այդպիսի հարցերը կարող են անվանվել նաև վիճակագրական հարցեր, նրանք կանոնադրվում են «սեյթի կոդեր» WBE համակարգի համար: Համակարգը կարող է ներկայացնել նաև վիճակագրական հարցեր միայն «ինչպես կա»: Այս տիպի հարցերը ստեղծումը հաճախ չի պահպանվում WBE համակարգում, քանի որ այն կարող է ստեղծել գեներացիայի HTML-խմբագրիչում:

Հարցը կարող է ներկայացված լինել տարբեր ձևերով (օրինակ, բաց տեպ կամ բազմաթիվ ընտրություն) կամ տարբեր ինտերֆեյսների օգնությամբ: Երկրորդաբային կարգավորումը հարցերի բազմազան ընտրություններում կարող է փոփոխվել [2]: Սա ապահովվում է ավելի բարձր անհատական աստիճան: Այն օգտակար է մանկավարժական հայացքից և իջեցնում է խաբեության հնարավորությունը: Գոյություն ունի հարցերի ստեղծման 2 հիմնական մոտեցում: Գրաֆիկական օգտագործման ինտերֆեյս (GUI) և հարցերի նշումների հատուկ լեզու [3]:

Այս մոտեցումներից յուրաքանչյուրն ունի իր դրական և բացասական կողմերը: Արդի ժամանակաշրջանում GUI-ի հիմնավորված օգտագործումն առավել տարածված է և կիրառվում է բոլոր բարգաճած WBE-համակարգերում [4]: Սակայն մի քանի WBE-համակարգեր օգտագործում են GUI, բայց չեն պահպանում հարցեր ներքին ֆորմատում: Ամենից լավ միջոցը պահպանման համար հանդիսանում է վիճակագրական թեստը կամ հարցաքննության աչիքն հարցերի վիճակագրական հաջողականությունը: Առավել լավ տարբերակ է ձևավորվում, երբ թեստի կազմավորումը հիմնավորված է ֆունկցիոնալ հարցերի տվյալների ճնշման Տվյալների հենքն ավելացնում է այն, որը նախատեսված է հանձնման համար: Ի տարբերություն ապահովված ձևաչափի ցուցակից, տվյալների հենքն էականորեն ձևավորված ու մատչելի է հարցերի հանձնման համար: Տվյալների հենքում հարցերի առկայության դեպքում ու միայն մանկավարժը կարող է ձևավորել հարցաքննումը, երբ այն անհրաժեշտ է, այլ հենք համակարգը կարող է գլխավորել հարցաքննումը հարցերի դարձանից ընտրելով հարցերը Արդյունքում, բոլորի ռաուցումը կարող է առաջարկված լինել անհատական հարցումով, ինչպես նշանակալի չափով կբացառի խաբելու հնարավորությունը: Բոլոր համակարգերի ավելանալիս լիցենզիայից իրագործման արդյունքը կայանում է նրանում, թե ինչպես ապահովել հարցերի հերթափոխությունը, որոնք ձևավորվում են թեստի գործընթացը [4]:

Ըստ իս, նպատակին հասնելու ամենաեռասարակ միջոցը կայանում է յուրաքանչյուր թափ վերաբերյալ թեստի կազմումը: Այս մոտեցումը օգտագործելով իջեցվում է նույն հարցի կրկնօգտակար օգտագործման հնարավորությունը տարբեր դասերի ընթացքում:

Տեխնոլոգիայի ինտերակտիվ տիպը, որն օգտագործվում է ուսուցման պատասխանները աստաթու համար, հանդիսանում է WBE-համակարգի առավել կարևոր գործոններից մեկը:

HTML-ֆորմատները շատ հարմարավետ են իմանական տիպի հարցերի ներկայացման համար: Ավելի նոր տեխնոլոգիական հարցերի հանձնման և պատասխանների գնահատման համար օգտագործվում է Java Script-ը:

Տեխնոլոգիայի փոխներգործության ընտրումը նշանակալի ազդում է գնահատման գործընթացի ֆունկցիոնալ հնարավորությունների վրա: Գնահատումը դա այն գործընթացն է, երբ ուսուցման պատասխանները դասակարգվում են, քրեյն ճիշտ/սխալ կամ մասնակի ճիշտ:

Հավաքակ կապը շատ կարևոր դիտակտիկական ռեսուրս է: Ուսուցման գործընթացի ապահովման համար WBE-համակարգերով գնահատումն ավելի յոխտ են և ապահովում են հակառակ կապեր:

Խիստ գնահատման և ուսուցման օգտագործման միակ հարմար միջոցը կախված է ավելի զարգացած տեխնոլոգիաների օգտագործման հետ, որոնք թույլատրում են ստանալ հարցերի անսահմանափակ քանակություն, պարամետրական հարցերի օգտագործում և թեստերի գեներացիա ըստ գիտելիքների ու տվյալների:

Այս պարագայում WBE-համակարգը կարող է ապահովել հաղթահարելու ի հայտ եկող իրավիճակները: Եթե թեստը տրված է բացառապես ինքնագնահատման համար, ապա հակառակ կապի գեներացիան պետք է լինի գլխավորը WBE-համակարգի թեստավորող փուլում: Ուսանողը միայն է, որ տիտի տեսնի թեստավորման արդյունքները: Ավելի զարգացած համակարգերը սովորաբար պահպանում են արդյունքները ֆայլերում և ապահովվում են մուտքի սահմանափակ հնարավորություններ [5]:

Ըստ իս, թեստերի տեսքով առաջարկված հանձնարարությունների առավելությունները՝ ավանդական հանձնարարությունների և հարցերի համեմատությամբ, հանդիսանում են համատեղությունը, տրամաբանական կառուցվածքը, ստանդարտներին համապատասխանումը և թեստավորման ու դրա արդյունքների գնահատման միասնական և հարաբերական գործընթացը: Հենց այս առավելությունները թեստերը դարձնում են ավելի անհրաժեշտ ուսուցման արդյունքների գնահատման համար [6]:

Թեստային հանձնարարությունների ներկայացման նման ձևերը մաքսիմալ հեշտացրել են դրանց ձևավորումը և թույլ են տվել ստեղծել մանկավարժական հսկողության և գնահատման գործընթացներն ավտոմատացնող SՏՏ միջոցներ: ՏՏՏ վերահսկիչ-գնահատող միջոցների կառուցման մեջ անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք պահանջներ, որոնք պայմանավորված են ժամանակակից դիդակտիկայով:

Գրականություն

1. <http://upload.stat-nkr.am>.
2. Asymetrix 1998] Asymetrix (1998). Librarian, Asymetrix Learning Systems, Inc., Bellevue, WA. <http://www.ASYMETRIX.com/products/librarian/> (Accessed 20 September, 1998).
3. [Blackboard 1998] Blackboard (1998). CourseInfo 1.5, Blackboard Inc. http://www.blackboard.net/ps_courseinfo.htm (Accessed 21 August, 1998).
4. Талызина Н.Ф. Управление процессом усвоения знаний, М.: МГУ, 2004.
5. Березин С., Раков С., Internet у вас дома, СПб.: БХВ, Санкт-Петербург, 1999.
6. Վ.Վ.Ասատույան «Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմանը ուսուցման արդյունքների վերահսկում և գնահատում», ԱրԴՀ «Գիտական տեղեկագիր», 2(20), 2009թ., էջ 23-27:

Резюме

Настоящая статья содержит обзор технологий Wbe-тестирования. Статья предлагает методику оценки, которая может использоваться специалистами в Wbe-основанном обучении для понимания и сравнения особенностей тех или иных систем Wbe-тестирования.

УДК 681.3

Прикладная математика и информатика

ОБ ИСПОЛЬЗОВАНИИ ОДНОЙ МОДЕЛИ ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА ДЛЯ АНАЛИЗА УДЕЛЬНОГО ПОТРЕБЛЕНИЯ

Ж.З.Захарян

Предположим, что можно управлять удельным потреблением с целью максимизировать интегральное удельное дисконтированное потребление за длительный промежуток времени:

$$\int_0^{\infty} e^{-\delta t} c(t) dt,$$

где δ – коэффициент дисконтирования.

В этот интеграл будущие значения удельного потребления входят с экспоненциально убывающим весом.

Таким образом, приходим к следующей модели *оптимального роста*:

$$\max_c \int_0^{\infty} e^{-\delta t} c(t) dt, \quad (1.1)$$

$$c \leq c \leq f(k), \quad (1.2)$$

$$\frac{dk}{dt} = -\lambda k + f(k) - c, \quad k(0) = k_0. \quad (1.3)$$

В этой задаче выражение (1.1) задает критерий, (1.2)-область допустимых значений управляющего параметра c (c -минимальное допустимое с социальной точки зрения значение удельного потребления), (1.3)-уравнение для единственной фазовой переменной k . Решением данной задачи служит оптимальная допустимая траектория удельного потребления $c^*(t)$, доставляющая максимум функционалу (1.1), и соответствующие ей оптимальные траектории фондовооруженности $k^*(t)$ и удельного ВВП $y^*(t) = f[k^*(t)]$. Вместе $c^*(t)$, $k^*(t)$, $y^*(t)$ составляют траекторию оптимального экономического роста.

В соответствии с алгоритмом принципа максимума Понтрягина вводим одну сопряженную переменную ψ (поскольку только одна фазовая переменная k) и строим гамильтониан:

$$H = e^{-\delta t} c + \psi(-\lambda k + f(k) - c). \quad (1.4)$$

Уравнение для сопряженной переменной имеет вид $\left(\frac{d\psi}{dt} = -\frac{\partial H}{\partial k}, \psi(T) = \frac{\partial F}{\partial y^T} \right)$:

$$\frac{d\psi}{dt} = [\lambda - f'(k)]\psi, \quad \psi(+\infty) = 0.$$

Сопряженную переменную ψ удобнее представить в виде $\psi = e^{-\delta t} q$, поэтому

$$\frac{dq}{dt} = -\delta e^{-\delta t} q + e^{-\delta t} \frac{dq}{dt}$$

и для q получаем следующее уравнение:

$$\frac{dq}{dt} = -[f'(k) - (\lambda + \delta)]q.$$

Поскольку общее решение уравнения имеет вид:

$$q = \exp\left\{\int [f'(k) - (\lambda + \delta)] dt\right\}, \quad \text{то } q > 0.$$

Теперь надо максимизировать гамильтониан:

$$\max_{c \in [c, f(k)]} e^{-\delta t} [(1-q)c + q(f(k) - \lambda)].$$

Поскольку, как видно из последнего выражения, гамильтониан линейно зависит от c с коэффициентом $(1-q)$, то его максимум достигается на концах отрезка $[c, f(k)]$ при $q \neq 1$ и в некоторой промежуточной точке при $q = 1$, тем самым

$$c^*(t) = \begin{cases} \underline{c} & \text{при } q > 1, \\ c(t) & \text{при } q = 1, \\ f[k(t)] & \text{при } q < 1. \end{cases} \quad (1.6)$$

При уточнении оптимального правила (1.6) необходимо принимать во внимание, что k и q удовлетворяют уравнениям (1.3) и (1.5), т. е. участки этих траекторий-решений участвуют в образовании правила (1.6).

Уравнение (1.3) и (1.5) имеют следующие стационарные решения $\left(\frac{dk^E}{dt} = 0, \frac{dq^E}{dt} = 0\right)$:

$$f'(k^E) = \lambda + \delta, \quad -\lambda k^E + f(k^E) = c^E. \quad (1.7)$$

В частности, $q = 1$ является стационарным решением уравнения (1.5), поэтому при $q = 1$ выполняется (1.7). Таким образом, оптимальное правило приобретает следующий вид:

$$c^*(t) = \begin{cases} \underline{c} & \text{при } q > 1, \\ f(k^E) - \lambda k^E & \text{при } q = 1, \\ f[k(t)] & \text{при } q < 1. \end{cases} \quad (1.8)$$

Исследуем оптимальные траектории фазовой и сопряженной переменных $k^*(t)$, $q^*(t)$ в предположении $c < c^E$.

1. Рассмотрим область $q > 1$. В этой области $c^*(t) = \underline{c}$, поэтому уравнение для фазовой переменной принимает вид:

$$\frac{dk}{dt} = f(k) - \lambda k - \underline{c}, \quad k(0) = k_0. \quad (1.9)$$

Обозначим через k_* меньший корень уравнения

$$f(k) - \lambda k - \underline{c} = 0,$$

графическое решение которого показано на рис. 1.1




Рис. 1.1

Поскольку $\underline{c} < c^E$, то $f(k^E) - \lambda k^E - \underline{c} > 0$, тем самым $k_L < k^E$, поэтому при $k_0 < k_L < \frac{dk}{dt} < 0$, т. е. фондovoоруженность убывает и удаляется от стационарного значения. Напротив, при $k_L < k_0 < k^E$ $\frac{dk}{dt} > 0$, и фондovoоруженность возрастает, оставаясь левее стационарного значения $k(t) < k^E$. Поскольку $k(t) < k^E$, то $\frac{dc}{dt} < 0$, тем самым $q > 1$ и непрерывно убывает, поэтому наступит такой момент t_2^* , для которого $q(t_2^*) = 1$, при этом $k^*(t_2^*) = k^E$, $c^*(t_2^*) = f(k^E) - \lambda k^E = \underline{c}$.

Если же $k_0 > k^E$, то $\frac{dk}{dt} > 0$ и $q(t)$ удаляется от стационарного значения $q^E = 1$.

2. Теперь рассмотрим область $q < 1$. В этом случае $c^*(t) = f[k(t)]$, т. е. на потребление работают все фонды (нет ни расширения, ни даже восстановления фондов), поэтому уравнение для фазовой переменной примет вид:

$$\frac{dq}{dt} = -\lambda q, \quad k(0) = k_0.$$

Решение последнего уравнения –

$$k^*(t) = k_0 e^{-\lambda t}.$$

Если $k_0 < k^E$, то нет сходимости к стационарному значению k^E . При $k_0 > k^E$ фондovoоруженность, убывая, в некоторый момент t_2^* достигнет стационарного значения k^E :

$$k_0 e^{-\lambda t_2^*} = k^E,$$

при этом $c^*(t_2^*) = c^E$.

На рис.1.2 и рис.1.3 показаны оптимальные траектории фондovoоруженности и удельного потребления для тех случаев, когда имеет место сходимость к стационарным траекториям (верхний индекс (1) соответствует области $q > 1$, верхний индекс (2) – области $q < 1$).




Рис. 1.2 Оптимальные траектории фондovoоруженности




Рис. 1.3 Оптимальная траектория потребления

Пусть имеем три разных предприятия, выпускающие мебельные продукции. Соответствующие данные приведены в таблице, где K – капитал (ОФП);

- z – трудовые ресурсы;
- u – коэффициент износа;
- x – эластичность по фондам.


Определим удельное потребление, которое определяется следующим образом:

$$c = \frac{C}{z}$$

где C – потребление по месяцам.

Таким образом, получаем

	Удельное потребление за 2006	Удельное потребление за 2007
январь	41336	46617
февраль	41381	54910
март	67028	10622
апрель	104236	138679
май	102551	125723
июнь	129507	134353
июль	127582	87397
август	128218	118856
сентябрь	120749	146841
октябрь	138410	14876
ноябрь	91551	150039
декабрь	87641	149000



Траектория удельного потребления за 2006 г. и 2007 г.
 Теперь посмотрим зависимость потребления от дохода населения.
 Денежные доходы и расходы населения

	2006 г.	2007 г.
Денежные доходы населения	57901,8	69103,3
Денежные расходы населения	56449,4	66862,2
Денежные расходы на товары	82%	78,3%




График зависимости потребления от дохода за 2006 г.




График зависимости потребления от дохода за 2007 г.

Если $c^*(t) = f(k) = k^\alpha = k^{0.25}$, т. е. на потребление работают все фонды (нет расширения, ни даже восстановления фондов), то фондорученность убывает. Действительно, согласно (1.3) имеем


$$\frac{dk}{dt} = -\mu k,$$

Решение этого уравнения —

$$k(t) = k_0 e^{-\mu t},$$

где $k_0 = 1160384$.

Получим



Լիտերատուրա

1. Агапов Т. А., Серегина С. В. Макроэкономика. Учебник, 1999 г.
2. Болтянский В. Г., Оптимальное управление дискретными системами. -М.: Наука, 1973 г.
3. Борисов Е. Ф., Основы экономической теории. -М., 1996 г..
4. Бугаян И. Р., Макроэкономика. Учебное пособие.-Ростов н/Д.:Феникс, 2000 г.
5. Колемаев В.А., Стороверов, Турундаевский. Теория вероятностей и математическая статистика. -М: 1999 г.
6. Колемаев В.А., Экономико-математическое моделирование. Моделирование макро-экономических процессов и систем.-М: Юнити, 2005 г.
7. Понтрягин Л. С., И др. Математическая теория оптимальных процессов. -М.: Наука, 1961 г.
8. Самарский А. А., Математическое моделирование.-М.: Физматлит, 2002 г.
9. Терехов Л. Л., Экономико-математические методы. -М., 1968 г.

Ամփոփում

Աշխատանքում դիտարկվել են տնտեսության աճի օպտիմալ կառավարման խնդրի մաթեմատիկական մոդելը: Նա հնարավորություն է տալիս գտնել օպտիմալ կառավարումը, որը բնորոշում է մեկ աշխատողի օպտիմալ սպառողական մակարդակը:

ՄԵՆԱՆԻԿԱԿԱՆ ՓՈՔՐ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ՝ ՆԵՐԳՈՐԾՈՂ
ԼՈՎԱՐԻԹՄԱԿԱՆ ՈՒԺԻ ՊԱՅՄԱՆՈՒՄ

Մ.Մ.Անդրեասյան, Ա.Մ.Մինասյան, Մ.Մ.Մինասյան

Տեսական ֆիզիկայի դասընթացում լավ հայտնի է [1] ձեռնարկը, որում նյութի յուրօրինակ շարադրանքը ուղեկցվում է խնդիրներով՝ նվիրված, ի թիվ այլոց, նաև փոքր տատանումներին: Մի շարք խնդիրներ մեկնաբանում են միաշափ սոխաթղական տատանումների գրգռման առանձնաղեկներ: Դրանք ներկայացնող ուժերը, բացահայտ կախված լինելով ժամանակից, անկորուստ (կամ թոմսոյան) համակարգը դարձնում են ոչ ավտոմոմ, ինչի հետ կապված՝ շարժման հավասարումն է՝

$$m\ddot{x} + kx = F(t): \quad (1)$$

Առաջարկվում է ընդհանրացնող լուծում կամայական իրական $F(t)$ -ների համար՝

$$x(t) = (i\omega)^{-1} \operatorname{Im} \left\{ e^{-i\omega t} \left[\int_0^t \frac{1}{m} F(\tau) e^{-i\omega \tau} d\tau + \xi_0 \right] \right\}, \quad (2)$$

ինչը ձեռք է բերվում՝ նախապես ներմուծելով $\xi = \dot{x} + i\omega x$ կոմպլեքս փոփոխական և նվագեցնելով (1) դիֆերենցիալ հավասարման կտրվել: Նշանակումներում օգտագործված են տատանակի սեփական ω հաճախությունը և $\xi|_{t=0} = \xi_0$ սկզբնական, իսկ Im -ը պայմանավորում է $\xi(t)$ -ի կեղծ մասի առանձնացումը:

Մեզ օգտակար է թվում որոշ խնդիրների մեկնաբանումը ըստ (2) սխեմայի ուղեկցել լրացուցիչ եփմամբումներով, որոնք ելնում են մաթեմատիկայի համալսարանական ծրագրային նյութից և այդ առումով բարձրացնում են նրա կիրառական գրառությունը: Մասնավոր դեպքում ուժային նոր ֆունկցիայի՝ լոգարիթմի՝ ընտրությունը չի կրկնում, այլ գումարվում է [1]-ում առկա դեպքերին, մոտիկ է ձեռնարկի թ.2 խնդրին (որում $F(t)$ -ն ներառվում է $F=0$, երբ $t < 0$, $F = F_0 t/T$, երբ $0 < t < T$, $F = F_0$, երբ $t > T$), նաև այն հետաքրքիր է կիրառական տեսանկյունից:

Ժամանակային $t \geq 0$ սխեմայում շարժման նորացված հավասարումն է՝

$$m\ddot{x} + b\dot{x} + k_0 x = F_0 \ln \left(1 + \frac{t}{\tau_0} \right): \quad (3)$$

Նրա համար՝ $x = \dot{x} = 0$, երբ $t = 0$: Ի տարբերություն (1)-ի թույլատրվում են մեխանիկական էներգիայի կորուստներ ևս ($b \geq 0$): Այս պարագայում ընդհանրացված գրանցման ավելի հարմար տեսքն է

$$\ddot{x} + 2\lambda_1 \dot{x} + \omega_0^2 x = -\omega_0^2 A_0 \ln \left(1 + \frac{t}{\tau_0} \right), \quad (3')$$

որտեղ A_0 և τ_0 -ն հաստատուններ են: $\lambda_1 = b/2m$, $\omega_0^2 = k_0/m = \omega_1^2 + \lambda_1^2$, $A_0 = -F_0/k_0$:

Մեր քննարկելիք (3) հավասարման մոտիկությունը (1)-ին կարելի է ապահովել, եթե ազատվենք $(n-1)$ -րդ կարգի ածանցյալ պարունակող անդամից: Արդեն (3)-ում դա կվերաբերի $2\lambda_1 x$ -ին: Այդ ընթացքում ըստ [2,3] ի կօգտվենք $x(t) = u(t) v(t)$ տեսքի նշանակումից, որում տեղի ունի

$$u(t) = \exp\left(-\frac{1}{n} \int \frac{f_{n-1}}{f_n} dt\right) \neq 0$$

և դրանով իսկ ապահովված է $x(t)$ -ի ու $v(t)$ -ի արմատներին համընկումը: Հիշյալ նշանակումը կքննի ազատվող կարծեցված հավասարմանը, այն է՝ (4)-ին, եթե (3')-ի հիմքի վրա իրականացվի քայլերի հետևյալ հաջորդականությունը.

$$\begin{aligned} u(t) &= \exp\left(-\frac{1}{2} \int \frac{2\lambda_1}{1} dt\right) = e^{-\lambda_1 t}, \\ x(t) &= e^{-\lambda_1 t} v(t), \\ \ddot{x} &= \left(v e^{-\lambda_1 t}\right)'' = (\ddot{v} - 2\lambda_1 \dot{v} + \lambda_1^2 v) e^{-\lambda_1 t}, \\ 2\lambda_1 \dot{x} &= 2\lambda_1 \left(v e^{-\lambda_1 t}\right)' = (2\lambda_1 \dot{v} - 2\lambda_1^2 v) e^{-\lambda_1 t}, \\ \ddot{x} + 2\lambda_1 \dot{x} + \omega_0^2 x &= [\ddot{v} + (\omega_0^2 - \lambda_1^2) v] e^{-\lambda_1 t} = (\ddot{v} + \omega_1^2 v) e^{-\lambda_1 t}, \\ \ddot{v} + \omega_1^2 v &= -\omega_0^2 A_0 e^{-\lambda_1 t} \ln\left(1 + \frac{t}{\tau_0}\right); \end{aligned} \quad (4)$$

Վերջինիս լուծումը կարելի է որոնել կամայական հաստատունների վարիացիայի մեթոդով, որում պետք է օգտվել, $\ddot{v} + \omega_1^2 v = 0$ համասեռ հավասարման ընդհանուր ինտեգրալից՝ $v_1(t) = C_1 \cos \omega_1 t + C_2 \sin \omega_1 t$, և C_1, C_2 հաստատունները փոխարինել համապատասխանորեն

$$w_1(t) = -\frac{1}{\omega_1} \int_0^t R(\xi) \sin \omega_1 \xi d\xi \quad \text{և} \quad w_2(t) = \frac{1}{\omega_1} \int_0^t R(\xi) \cos \omega_1 \xi d\xi \quad \text{ժամանակային ֆունկցիաներով}$$

[2] Այդ դեպքում իբրև (4)-ի մասնավոր լուծում կունենանք՝

$$v(t) = -\frac{\cos \omega_1 t}{\omega_1} \int_0^t R(\xi) \sin \omega_1 \xi d\xi + \frac{\sin \omega_1 t}{\omega_1} \int_0^t R(\xi) \cos \omega_1 \xi d\xi,$$

որտեղ նշանակված է

$$R(\xi) = -\omega_0^2 A_0 e^{-\lambda_1 \xi} \ln\left(1 + \frac{\xi}{\tau_0}\right). \quad (5)$$

Կարելի է $\cos \omega_1 t$ և $\sin \omega_1 t$ գործակիցները $v(t)$ լուծման մեջ տեղափոխել ինտեգրալների տակ: Այդ դեպքում

$$v(t) = \frac{1}{\omega_1} \int_0^t R(\xi) \sin[\omega_1(t - \xi)] d\xi: \quad (6)$$

Այժմ, երբ ստացված են անհրաժեշտ բաղադրիչները, վերադառնում ենք $x(t) = u(t) v(t)$ -ին՝

$$= -\frac{\omega_0^2}{\omega_1} A_0 \int_0^t e^{-\lambda_1(t-\tau)} \ln \left(1 + \frac{\tau}{\tau_0} \right) \sin[\omega_1(t-\xi)] d\xi :$$

Նշանակելով $t - \xi = \tau$, $t + \tau_0 = \vartheta$ այս լուծումը բերում ենք ավելի սեղմ տեսքի՝

$$\begin{aligned} x(t) &= -\frac{\omega_0^2}{\omega_1} A_0 \int_0^t e^{-\lambda_1 \tau} \ln \left(1 + \frac{t-\tau}{\tau_0} \right) \sin \omega_1 \tau d\tau = \\ &= -\frac{\omega_0^2}{\omega_1} A_0 \int_0^t e^{-\lambda_1 \tau} \ln \frac{\vartheta - \tau}{\tau_0} \sin \omega_1 \tau d\tau : \end{aligned}$$

Քանի որ [1]-ից փոխառնված թ.2 խնդրում դիտարկվում է անկորդատ տատանակի ապա (7) և (2) լուծումներին կարելի է գուգահեռաբար հետևել, եթե պահանջներ $\lambda_1 \rightarrow 0$, $\lambda_1 \ll \omega_0$ ։ Առաջին դեպքում (7)-ից ստանում ենք

$$x_1(t) = -\omega_0 A_0 \int_0^t \ln \frac{\vartheta - \tau}{\tau_0} \sin \omega_0 \tau d\tau,$$

և կարող ենք հետագա պարզեցումների գալ՝ օգտվելով մասերով ինտեգրումից.

$$\begin{aligned} \frac{x_1(t)}{A_0 \omega_0} &= \left(\ln \frac{\vartheta - \tau}{\tau_0} \cdot \frac{\cos \omega_0 \tau}{\omega_0} \right) \Big|_0^t - \int_0^t \frac{\cos \omega_0 \tau}{\omega_0} \frac{d(\vartheta - \tau)}{\vartheta - \tau} = \\ &= -\frac{1}{\omega_0} \ln \frac{\vartheta}{\tau_0} + \frac{1}{\omega_0} \int_0^t \frac{\cos \omega_0 \tau}{\vartheta - \tau} d\tau = \frac{1}{\omega_0} \left[-\ln \frac{\tau_0}{\tau_0} + t + \int_0^t \frac{\cos \omega_0 \tau}{\vartheta - \tau} d\tau \right] \end{aligned}$$

Վերջինում կատարում ենք փոփոխականի փոխարինում՝ $\vartheta - \tau = \theta$, $d\tau = -d\theta$ և ստանք

$$\begin{aligned} - \int_0^t \frac{\cos \omega_0 \tau}{\vartheta - \tau} d\tau &= \int_{\vartheta}^{\tau_0} \frac{\cos(\omega_0 \vartheta - \omega_0 \theta)}{\theta} d\theta = \int_{\vartheta}^{\tau_0} \frac{\cos \omega_0 \vartheta \cdot \cos \omega_0 \theta + \sin \omega_0 \vartheta \cdot \sin \omega_0 \theta}{\theta} d\theta \\ &= \cos \omega_0 \vartheta \int_{\vartheta}^{\tau_0} \frac{\cos \omega_0 \theta}{\theta} d\theta + \sin \omega_0 \vartheta \int_{\vartheta}^{\tau_0} \frac{\sin \omega_0 \theta}{\theta} d\theta : \end{aligned}$$

Երկու ինտեգրալներից առաջինը Կլալսակերպ ենք՝ նպատակ ունենալով ինտեգրալային կոսինուսի՝

$$\begin{aligned} \int_{\vartheta}^{\tau_0} \frac{\cos \omega_0 \theta}{\theta} d\theta &= - \int_{\tau_0}^{\vartheta} \frac{\cos \omega_0 \theta}{\theta} d\theta = - \left[\int_{\tau_0}^{\vartheta} \frac{\cos \omega_0 \theta}{\theta} d\theta - \int_{\vartheta}^{\tau_0} \frac{\cos \omega_0 \theta}{\theta} d\theta \right] = \\ &= - \int_{\tau_0}^{\vartheta} \frac{\cos \omega_0 \theta}{\theta} d\theta - \left[- \int_{\vartheta}^{\tau_0} \frac{\cos \omega_0 \theta}{\theta} d\theta \right] = - \int_{\tau_0}^{\vartheta} \frac{\cos(\omega_0 \theta)}{\omega_0 \theta} d(\omega_0 \theta) - \left[- \int_{\omega_0 \vartheta}^{\omega_0 \tau_0} \frac{\cos(\omega_0 \theta)}{\omega_0 \theta} d(\omega_0 \theta) \right] = \\ &= Ci(\omega_0 \tau_0) - Ci(\omega_0 \vartheta), \quad \tau_0 > 0, \quad \vartheta > 0 : \end{aligned}$$

Լրացուցիչ հնարավոր է Ci -ից անցում $-ci$ -ի, ընդունելով (ըստ [4,5] -ի)

$$ci(x) = \int_x^{\infty} \frac{\cos u}{u} du \quad (10)$$

Այդպիսի սահմանման շնորհիվ տեղի ունի

$$\int_0^{\omega_0} \frac{\cos \omega_0 \theta}{\theta} d\theta = ci(\omega_0 \theta) - ci(\omega_0 \tau_0): \quad (11)$$

Այժմ նույնանման փոխակերպումներ ենք կատարում նաև երկրորդ ինտեգրալի հետ և բերում այն ոչ տարրական մեկ այլ ֆունկցիայի՝ ինտեգրալային սինուսի.

$$\begin{aligned} \int_0^{\omega_0} \frac{\sin \omega_0 \theta}{\theta} d\theta &= \int_0^{\omega_0} \frac{\sin \omega_0 \theta}{\theta} d\theta = \left[\int_0^{\omega_0} \frac{\sin \omega_0 \theta}{\theta} d\theta - \int_0^{\omega_0} \frac{\sin \omega_0 \theta}{\theta} d\theta \right] = \\ &= \left[\int_0^{\omega_0} \frac{\sin \omega_0 \theta}{\theta} d\theta \right] - \left[\int_0^{\omega_0} \frac{\sin \omega_0 \theta}{\theta} d\theta \right] = \left[\int_0^{\omega_0} \frac{\sin(\omega_0 \theta)}{\omega_0 \theta} d(\omega_0 \theta) \right] - \left[\int_0^{\omega_0} \frac{\sin(\omega_0 \theta)}{\omega_0 \theta} d(\omega_0 \theta) \right] = \\ &= si(\omega_0 \tau_0) - si(\omega_0 \theta), \end{aligned} \quad (11')$$

որտեղ սահմանված է (ըստ [4,5]-ի)

$$si(x) = - \int_x^{\infty} \frac{\sin u}{u} du \quad (10')$$

վերջապես վերադառնում ենք (8'), կատարում (11) և (11')-ից բխող տեղադրումներ և ստանում.

$$x_1 = -A_0 \left\{ \ln \frac{\theta}{\tau_0} + [ci(\omega_0 \theta) - ci(\omega_0 \tau_0)] \cos \omega_0 \theta - [si(\omega_0 \theta) - si(\omega_0 \tau_0)] \sin \omega_0 \theta \right\}, \quad (12)$$

որտեղ $\theta = \tau_0 + t$:

Այսպիսով կորուստներից ազատ մոխսահիպական համակարգում դիտվում են ժամանակի մեջ m զանգվածի մոնոտոն հեռացում գրոյական դիրքից (լոգարիթմական օրենքով) և տատանողական տեղաշարժեր, օրոնք «պարուրված են» լոգարիթմին: Ստիպողական շարժման սկզբնապահին, երբ $t = 0_+$, այդ երկու տեղաշարժերը հակաֆազ են: Ավելի ուշ ժամանակներում, երբ $t \gg 2\pi/\omega_0$, տատանումը միակ արագ շարժումն է, քանի որ հեռացումը հետզհետե թուլացող է: Եթե վերջինս մոտարկվի որպես ժամանակի ընթացքում հազնցող, ապա խնդիրների այս համադրումը կարող է արդյունքների որակական մոտիկություն բացահայտել:

Դրա ընկալման հարմարավետության համար համեմատենք նաև տարբեր խնդիրներից ստացվող գրաֆիկները, նույնը թողնելով տատանալի մի հավասարակշիռ վիճակից մյուսին «տեղափոխվելու» ժամանակահատվածը, օրինակ, պահելով այն հավասար սեփական տատանման պարբերության քառորդին:

Թող տատանալի պարամետրերն են՝ $b = 0$, $\omega = 600$ ռադ/վ, և նրանում տեղաշարժի միավոր երկարությունն է՝ $F_0/m\omega^2$: Սկսելով թ.2 խնդրից, վերաբտադրենք ուժի գծային աճի տեղադրումն համապատասխանող լուծումը՝


$$x(t) = \frac{F_0}{mT\omega^3} (\omega t - \sin \omega t): \quad (13)$$

Եթե $T \gg \pi/2\omega$, ապա նկատի ունենալով $T = 0.05$ վ և $\omega T = 30$ տալ պարամետրեր
 կկատուենք նորմավորված տեղաշարժի գրաֆիկը ըստ նկ.1-ի: Նույն ժամանակ
 տեղամասում ($0 < t < 0.05$ վ) պատկերը այլ է, եթե ուժի վերընթացը ավելի կտրուկ է (շեղանկ
 $\omega T = \pi/2$ պահանջի): Դա պատկերված է նկ.2-ում՝ ներառելով հավասարակշռության
 տեղափոխությունը, ինչպես տեղի ունի հիշյալ խնդրում ([1], նկ.24), և լայնությունը
 $t \geq T$ տիրույթին համապատասխանող լուծմամբ, այն է՝

$$x(t \geq T)/(F_0 / m\omega^2) = 1 + 0.9 \sin(\omega t - 3\pi/4) = 1 - 0.9 \cos(\omega t - \pi/4) :$$



Նկ.1.



Նկ.2.

Բնական է սպասել, որ ուժի վերընթացի ժամանակամիջոցի հետագա նվազումը հանգեցնի
 հնարավոր դարձնի ձեռնարկի նաև թ.1.ա խնդրի լուծման ստացումը, այն է՝

$$x(t > 0) = \frac{F_0}{m\omega^2} (1 - \cos \omega t) :$$

Իրոք, (14)-ին համապատասխանող $a = (c_1^2 + c_2^2)^{1/2}$ լայնությունը, որում $\omega T = \pi/2$
 դնալու ունենք $\frac{\sin \omega T/2}{\omega T/2} = 0.9$ գործակից, աճող է ընդհուպ մինչև $\omega T = 0$ սահմանը:


արժեքի իրականացումը: Հիշենք, որ $\omega T \rightarrow 0$ սահմանում տեղի ունի $\frac{\sin \omega T/2}{\omega T/2} = 1$, և (14)

փոխարեն կունենանք $x(t)/(F_0 / m\omega^2) = 1 - \cos \omega t$: Փուլային $\omega T/2 = \pi/4$ տարբերություն
 որ առկա է (14)-ում, նույնպես վերանում է $\omega T \rightarrow 0$ սահմանում:

Լայնությային փոփոխությունների տեղ են թողնում նաև լոգարիթմներն աճող ամպլիտուդաները
 Արձագանքը պայմանավորված է ներգրծող ուժի դինամիկայով, իսկ վերջինս էլ՝ ռեզոնանսային
 ընտրությամբ: Նկ.3-ի դեպքում $\tau_0 = 1.51 \times 10^{-3}$ վ: Գրգիռը ստացված է նորմավորված
 տեղաշարժը գնահատող ինտեգրալի օգնությամբ, այն է՝

$$\frac{x(t)}{-A_0} = \omega \int_0^t \ln\left(1 + \frac{t-\tau}{\tau_0}\right) \sin \omega \tau d\tau = 600 \int_0^t \ln[1 + 662.25(t-\tau)] \sin 600\tau d\tau ,$$

ինչը ըստ էության (12)-ի մասնավոր դեպք է: Նույնախի գրգիռը ժամանակային եաստատունի $\tau_0 = 10^{-9}$ վ դեպքում տրված է նկ.4-ի վրա: Նրանում ձևեր է բերված լայնության պնի բարձր արժեք:



Այստեղ, ինչպես և (14)-ում, արձագանքի ուժգնացումը անուղղակիորեն վկայում է ուժային ներգործության սպեկտրալ բաղադրության փոփոխման մասին՝ ի օգուտ բարձրաճախային բաղադրիչների:

Գրականություն

1. Л.Д.Ландау, Е.М.Луфшиц, Механика, М., Наука, 1973, с. 80-85.
2. В.И.Смирнов, Курс высшей математики т. 2, М., Наука, 1965, с. 91-92, 85-86.
3. Э.Камке, Справочник по обыкновенным дифференциальным уравнениям, М., Наука, 1971, с. 92-94.
4. Г.Корн, Т.Корн, Справочник по математике, М., Наука, 1970, с. 625.
5. Е. Янке, Ф.Эмде, Ф.Леп, Специальные функции, М., Наука, 1968, с.63.

Резюме

Для механической колебательной системы с одной степенью свободы рассматривается нормальная реакция на возмущающие воздействия с изменяющейся во времени динамикой развития.

ԱՍԻԱԿԱՆ ԾՆԱԳԱՅԼԵՐԻ – CANIS AUREUS ԷԿՈԼՈԳԻԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՎԱԾՈՅԻՆ
ԼՂՀ ՄԱՐՈՏԱԿԵՐՏԻ ԸՐՋԱՆԻ ԼԵՈՆԱՏԱՓԱՍՏԱՆԱՅԻՆ ԳՈՏՈՒՄ

Վ.Տ. Հայրապետյան, Ա.Ա. Գասպարյան

Աշխատանքում քննարկվում է ԼՂՀ Մարտակերտի շրջանի լեռնատափաստանային գոտի զիշատիչների ֆաունայում տարածված ասիական շնագայլերի մորֆոէկոնոմիկական էկոլոգիական առանձնահատկությունները: Պարզաբանվում է նշված գոտում շնագայլ թվաքանակի դինամիկան 2005 թ.-ից մինչև 2010 թ.:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզել ենք շնագայլերի սեզոնային ակտիվությունը, կերի կազմը, էկոտ- և էնդոմակրայոցները:

Լեռնային Ղարաբաղի (Արցախի) զիշատիչների ֆաունայում շնագայլերի ընտանիքի տեսակային կազմով, թվաքանակով, կենսազենոզներում և գյուղատնտեսության մեջ ունեցող դերով առաջատար դեր են զբաղեցնում: Ընտանիքի որոշ տեսակներ համարվում են զգալիներ: Դրանց որոշ ներկայացուցիչներ բավականին ստեմոնապիլոզ ազդեցության թողնում գյուղատնտեսության և անոռառտնտեսության վնասատու, կիպին նաև մարդու գյուղատնտեսական կենդանիների տրանսմիսիվ էիվանդոթյունների փրկանքող միջնորդ կրծողների արտալյազիաների վրա:

Շնագայլերը, մասնավորապես շնագայլերը, առանձնահատուկ հետաքրքրություն ներկայացնում, որպես կենսազենոզներում լայն տարածված, բազմաթիվ և էկոլոգիա կենդանիներ: Չնայած վերը նշվածին, որքան էլ դա անհավանական թվա, առաջարկվում է ֆաունայում շնագայլերը լուրջ ուսումնասիրության կարիք ունեն: Չկան վերջնականորեն տվյալներ այս զագանների ուղղահայաց գոտիականությամբ տարածվածության, էկոլոգիայի, բազմազան աճի ու զարգացման, կերի կազմի ու կենսաբանությանն առնչվող մի շարք այլ հարցեր վերաբերյալ: Այս առումով որպես մեր հետազոտման օբյեկտ ենք ընտրել շնագայլերի ընտանիք շնագայլերի զեղը:

Կենսաբանության ինտենսիվ զարգացումը էկոլոգներից պահանջում է հետազոտող տարբեր մեթոդների օգտագործում, նրանում օգտագործվող հստակից գիտությունները առանձնապես են ուսումնասիրողի կենդանու տեսակային, ժիզոնային և պոպուլյացիոն էկոլոգիայում առանձնահատկությունների ուսումնասիրությունների համար: Սակայն դա չի նմանակում էկոլոգիական մեթոդների դերը:

Նյութի հավաքն իրականացվել է սկսած 2006 թվականից, ստացիոնարային և երթուղային աշխատային ուսումնասիրությունների գործընթացում: Ուսումնասիրությունները կատարվել են ԼՂՀ Մարտակերտի շրջանի լեռնատափաստանային գոտում: Հետազոտությունները կատարվել և տարվա տարբեր սեզոններին: Էկոլոգիական դիտարկումները կատարվել են կենդանաբանաբան մեջ ընդունված մեթոդներով (Новиков, 1949, Наумов, 1963, Константинов, Мухомов, 2001, 2002, 2003, Հայրապետյան, 2003): Պարզել ենք կերի կազմը և սեզոնայինությունը, որի համար կատարել ենք ստամոքսի պարունակության և կղանքի մակրոսկոպիկ ուսումնասիրություններ: Կատարել ենք էկոտ և էնդոմակրայոցների հավաք, որի տեսակային կազմի որոշող իրականացրել ենք որոշիչներով (Բաղդասարյան, 1965; Явруян, Арутюнян, Айрапетян, 2007; Романов Б. В., Хисова Л. Н., Трыфанова Е. Н., Романов Н. Б., 2003; Урххарг Г. М., Эрмул Дж. Н., 2000):

Առանձնակի ուշադրություն ենք դարձրել այս կենդանիների բազմազան և հետապոստիվ զարգացման առանձնահատկություններին ու թվաքանակին, ինչպես նաև կենսազենոզներում դրանց դերին:

Շնագայլերն ունեն միջին չափեր: Մարմնի երկարությունն արուների մոտ տատանվում է 7-98 սմ, պոչին՝ 22-29 սմ, քաշը՝ 9-11,5 կգ, էգերի մոտ համապատասխանաբար՝ 70-89 սմ, 15-25 կգ, քաշը՝ 8,7-10 կգ: Այս զագանիկները արտաքինից նման են գայլերին, սակայն աչքի զանգված տարբերիչ առանձնահատկությունը պոչի կարճ լինելն է: Մաշկը ավելի սուր է: Դատարկի միտն մատների (երթորդնային և չորրորդնային) մատնային բարձիկները հեռուրն մտնու հետ միացված են կտմաբով, բացի Հյուսիսային Աֆրիկայում տարածված շնագայլերից (Аристов, Боровиков, 2001):

Գանգը բավականին փոքր է և քիչ զանգվածով քան գայլինը: Գանգի կոնդիլոբազալ լիկարությունը արունների մոտ 14-16 սմ է, էգերինը՝ 13-15 սմ, գանգի խորությունն այսուների մոտ՝ 5-6 սմ էգերինը՝ 4,6-5,8 սմ:

Ատամները մեծ չեն, նրկար գիշատիչ ատամը՝ P^4 1,5-1,8 սմ, M_1 1,7-1,8 սմ: Ինչպես նաև զնդի ծնոս նրկարագույնների գիշատիչ ատամը P^4 կարճ է, նրա երկարությունը փոքր է M^1-M^2 -ի լիկարությունից:

Մազածածկը կոպիտ է ու կոշտ: Ձմեռային մորթու նրանցը կնդոտու շիկա-մոխրագույն է, սև բծերով, մուրը և վերջույթները՝ դեղնաշիկավուն, կզակը և կռիւղը՝ սպիտակավուն: Մեր գիտարկումների արդյունքում պարզվել է, որ տափաստանային և նախալեռնային գոտիներում տարածված շնագայլերն ունեն գունային երանգների տարբերություններ, որն ամենայն էականակալությամբ էկոլոգիական առանձնաձևատկություն է: Հարթավայրային գոտիների բնակիչները ունեն գունավորման համեմատաբար բաց նրանգ, քան նախալեռնային և աշխատանքային գոտիների բնակիչները:

Շնագայլերն ունենում են երկու մագալիտություն՝ գարնանային, որը սկսում է մայիսի վերջից և ավարտվում հունիսի վերջին, մագալիտությունը կատարվում է գլխից և աջքի վերջույթներից, ավարտվում սրբանի և ալդի հատվածում: Աշնանայինը սկսում է հոկտեմբերի վերջից և ավարտվում ամսի արագ, իսկ մագալիտումը կատարվում է հակառակ ուղղությամբ: Մորթի արժեքավոր չէ:

